Դարբանդի եկեղեցւոյ դրութեան և Հայ ժողովրդեան բարեպաշտութեան համար չկրկնելով միանգամ գրածս՝ գնում եմ այս տեղ 1889 թուին ի 1 Նոյեմբերի № 335՝ Տ. Մակար Կաթուղիկոսին գրած յայտագրոյս օրինակը, որ տեսութեանս և համոզմանս ապացոյցն է, և է հետեւեալ բովանդակութեամբն՝

Նորին Վեհափառութեան

Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ. Մակարայ

յառաջնորդէ թեմին Հայոց
Համախուռ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ըստ պարտուց պաշտամանս ելեալ յայցելութիւն ժողովրդոյ թեմիս՝ յամսեանն անցելոյ օգոստոսի, օրհնեցի զհիմն եկեղեցական դպրոցաց Դանձակ և Աւանաշէն գիւղօրէից Ղամախւոյ թեմի Գեօքչայի գաւառի, և յամսեանն հոկտեմբերի գնացի ի Ղուբայ և աւուրս ինչ մնալով անդ՝ ծանօթացայ եկեղեցական և դպրոցական գործոց տեղւոյն, զորոց զթերութիւնս լցուցի խորհրդակցութեամբ քահանայի եկեղեցւոյն և հոգաբարձութեան դպրոցին, և անտի անցեալ ի Դարբանդ նոյնպէս միաբանեցի զժողովուրդն յեկեղեցւոջ և ի դպրոցին ողջունիւ Տեառն Յիսուսի և օրհնութեամբ Հերդ Վեհափառութեան։

Զեկեղեցին Դարբանդայ գտի ի վայելուչ դրութեան ըստ արտաքին շինութեան և ըստ ներքին բարեզարդութեան շնորհիւ Կաճկաճեան և Բաբայեան իշխանաց տեղւոյն. նոյնպէս և շինուած դպրոցին գտանի ի վայելուչ դրութեան, իսկ կառավարութիւն այնր դպրոցի յանապահով վիճակի, քանզի ժողովուրդ դարբանդայ սրբան կրօնասէր են և ջերմեռանդ առ եկեղեցին, այնքան և անտարբեր առ դպրոցն, ուստի և քանիցս յեկեղեցւոջ խօսելով զուսման կարեւորութենէ, և ի դահլիճ դրպրոցին ի ժողով հրաւիրելով զառաջաւորս՝ ժողովրդեան բացատրեցի նոցա զպէտս և զպահանջ ժամանակիս և զպարտաւորութիւնս իւրեանց առ որդիս, առ ազգն և առ եկեղեցին, որք և